

ՀԱՅԵՐԵՆ ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԻՊԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ
ՇԱՐԱՀՅՈՒՍԱՈՃԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ABSTRACT

THE SYNTACTIC AND STYLISTIC FEATURES OF ARMENIAN NOTARY DOCUMENT

Language is one of the primary instruments in the field of Law-therefore it is essential for the lawyers to harmonize the rules of general logic with the syntactic logic of the legal sentence. As is known, legal documents may have quite complex syntactic structures. An example of such a structure is the sales and purchase agreement in Armenian which is analysed in the present article from the syntactic, stylistic, logical and semiotic aspects.

Key Words: Legal document, jurisprudence, logical reasoning, gradation, semiotic point of view.

РЕЗЮМЕ

**СИНТАКТИЧЕСКИЕ И СТИЛИСТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ
АРМЯНСКОГО НОТАРИАЛЬНОГО ДОКУМЕНТА**

Язык является одним из основных инструментов в области юриспруденции: юристам-правоведам приходится согласовывать

* e-mail: mariam.karapetyan@ysu.am



Received: 20/06/2023

Revised: 27/06/2023

Accepted: 04/07/2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2023

правила общей логики и синтаксической логики построения предложения. В юридических документах встречаются довольно сложные конструкции особенно с точки зрения синтаксической организации предложения. Образцом такой конструкции является стандартный договор о купле-продаже, который нами был рассмотрен как с синтаксической, стилистической, так и семиотической точек зрения.

Ключевые слова. Юридический документ, юриспруденция, логическое рассуждение, градация, семиотическая точка зрения.

ԱՄՓՈՓՈՒՄ

Լեզուն իրավաբանների առաջնային գործիքներից է, ուստի իրավաբան-իրավագետների համար կարևոր է ընդհանուր տրամաբանության և շարահյուսական տրամաբանության կանոնների ներդաշնակումը: Իրավական փաստաթղթերում պատահում են շարահյուսական բավականաչափ բարդ կառուցվածքներ: Այդպիսի ուշագրավ մի կառուցվածք կա մի տիպային պայմանագրում, որի քննությանն անդրադարձել ենք շարահյուսական, ոճական, տրամաբանական և նշանագիտական հայեցակետերով:

Բանալի բառեր. Իրավական վավերագիր, իրավալեզվաբանություն, տրամաբանական դատողություն, աստիճանավորում, նշանագիտական հայեցակետ:

Մուտք

Թեև հայերեն իրավական փաստաթղթերը լեզվական տեսանկյունից կարոտ են բարելավման, այդուհանդերձ նրանցում նույնպես կան շարահյուսական բավականաչափ բարդ կառուցվածքներ, որոնց վրա արժե հրավիրել իրավական տեքստեր կազմող մասնագետ իրավաբանների ուշադրությունը՝ զարգացնելու,

կատարելագործելու և զանգվածայնացնելու այդ կարգի կառուցածները: Այդպիսի ուշագրավ մի կառուցվածք կա մի պայմանագրում, որի քննությանն անդրադարձել ենք պաշտոնական լեզվի ապահովման չափի և զուտ տրամաբանական կառուցվածքի հայեցակետերով, իսկ այժմ ուզում ենք նույն փաստաթուղթը քննել շարահյուսական, ոճական, տրամաբանական և նշանագիտական հայեցակետերով:

Աշխատանքի **արդիականությունը** հայերենի ընձեռած հնարավորությամբ իրավական փաստաթղթերի կիրառական արժեքի վերհանումն ու գնահատումն է՝ որպես պետական հաստատությունների կայացման անուրանալի առիավատյա: Աշխատանքի **նպատակն** է պարզել նոտարական փաստաթղթի լեզվական կացությունը և նպաստել լեզվական բարձր մակարդակով իրավական փաստաթղթերի տիպային նմուշների ստեղծմանը: Նպատակին հասնելու **խնդիրն** է իրավական տեքստի շարահյուսական կառուցվածքի զննությունը՝ կապակցման, մասնավորապես արժույթային կապերի վերհանմամբ: Հետազոտության մեթոդներն են **վերլուծությունը, համադրությունը, արտածությունը, աստիճանավորումը, կաղապարումը՝ բանաձևով և գծագրմամբ**: Աշխատանքի **նորույթը** իրավական վավերագիր տեքստի կառուցվածքի նորովի մեկնությունն է՝ շարահյուսական ավանդական վերլուծության և կաղապարային բանաձևերի համատեղությամբ:

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

«Առքուվաճառքի պայմանագրից» [7] դիտարկենք գնորդի իրավասությանը վերաբերող հատվածը (տե՛ս 2.3.–2.3.5.)՝ սրբագրված տարբերակով (պայմանագրից քաղած մեջբերումները տալիս ենք շղատառ):

2.3. Գնորդն իրավունք ունի՝

2.3.1. եթե Վաճառողը հրաժարվում է վաճառված ապրանքը հանձնելուց, միակողմանի հրաժարվելու սույն պայմանագիրը կատարելուց.

2.3.2. եթե Վաճառողը հանձնել է սույն պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, պահանջելու լրացնել ապրանքի պակաս հանձնված քանակը կամ հրաժարվելու չհանձնված ապրանքի համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարել է, պահանջելու վերադարձնել վճարված գումարը.

2.3.3. եթե հանձնված է անպատշաճ որակի ապրանք, իր ընտրությամբ պահանջելու՝

ա) համաչափ պակասեցնել ապրանքի գինը.

բ) ողջամիտ ժամկետում անհատույց վերացնել ապրանքի թերությունները.

գ) հատուցել ապրանքի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը.

2.3.4. չվերացող թերություններ հայտնաբերելու դեպքում իր ընտրությամբ՝

ա) հրաժարվելու սույն պայմանագիրը կատարելուց և պահանջելու վերադարձնել ապրանքի համար վճարված գումարը.

բ) պահանջելու փոխարինել անպատշաճ որակի ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով.

2.3.5. անլրակազմ ապրանք հանձնելու դեպքում իր ընտրությամբ պահանջելու՝

ա) համաչափ պակասեցնել ապրանքի զինը.

բ) ողջամիտ ժամկետում համարել ապրանքը:

Իրավական տեքստի կուռ տրամաբանականությամբ աչքի ընկնող չափազանց հետաքրքիր հարաբարդ կառուցվածք է այս շարադրանքը: Գնորդի իրավասության թվարկում է՝ «Գնորդն իրավունք ունի» ազդանշանով [1:110-116; 174-178], որին հաջորդում է տողատված թվարկումը: Ազդանշանի ձևավորվածությունն այնպիսին է, որ «իրավունք» բառի ազդարկմամբ թվարկվող միավորները հատկացուցիչներ են: Ասել է՝ **2.3.** համարով ելակետից պարզ է դառնում, որ ունենք հատկացական շրջադասված կապակցություն՝ հատկացուցիչների հետադասությամբ: Ունենք ընդհանուր հատկացյալ՝ բազմակի հատկացուցիչներով: Նախքան դրանց արձանագրումը հարկ է հիշել, որ սովորական շարադասությամբ, երբ հատկացուցիչն իր նախադաս դիրքում է,

հատկացուցիչ-հատկացյալ կառույցներում արժութային գորությունը հատկացուցչին է: Սովորական գործառություններում սեռական հոլովը ինքնին արժութակիր է, որի արժույթներն են կամ գոյականը (նաև փոխանունը), կամ կապը: Եվ քանի որ կապն ինքն էլ արժութակիր է, ապա սեռական հոլովով բառաձևի և կապի կապակցությունը փոխարժութային է (օրինակ՝ *սիրո մասին, սեղանի տակ, դարակի մեջ* և այլն): Ինչ վերաբերում է սովորական շարադասությամբ հատկացուցիչ-հատկացյալի գործառությանը, ապա այս դեպքում միակ արժութակիրը ստորադաս անդամն է՝ հատկացուցիչը: Բերված տեքստի շրջադասված կառուցվածքում արժութային դերափոխություն է տեղի ունեցել: Շարադասական փոխատեղմամբ փոխվել է նաև արժութակիր անդամը: Հատկացյալ-հատկացուցիչ կադապարում սպասելի միավոր է դառնում հատկացուցիչը, դրանով պայմանավորված՝ արժութակրության դեր է ստանձնում գերադաս՝ հատկացյալ անդամը: Բացի ատկացականությունից՝ իրավասությունը ենթադրում և հնարավորություն է տալիս դիմելու համապատասխան գործողությունների, որոնց առանցքը, ըստ փաստաթղթի, կա՛մ հրաժարումն է, կա՛մ պահանջը: Եվ քանի որ այդ գործողություններն արտահայտված են անորոշ դերբայներով, ուստի հաջորդ առանցքային նշանները այդ գործողությունների առարկաներն են՝ երբեմն ենթաստորադաս կառուցվածքով: Դիտարկվող իրավական փաստաթղթի մյուս առանցքային կողմն են կազմում այն պայմանները, որոնց առկայությամբ հնարավոր է դառնում վերոնշյալ

գործողությունների կատարումը: Արդ՝ իրավական նորմերի ապահովման տրամաբանական ընթացքը ցույց տալու համար դիմում ենք աստիճանավորման մեթոդի օգնությանը: 1-ին աստիճանում կբացահայտենք միջուկային նախադասությանն անմիջականորեն առնչվող առանցքային անդամները, 2-րդ աստիճանում՝ այդ անդամների արժույթները, 3-րդ աստիճանում վեր կհանենք իրավական կողմերի գործառույթների պայմանները՝ դրսևորված ստորադաս նախադասություններով և բառակապակցություններով՝ յուրաքանչյուր պայմանից առաջ կրկնելով «Գնորդն իրավունք ունի» գլխադասային նախադասությունը՝ ակնառու դարձնելու համար դրա և համապատասխան պայմանի անմիջական կապը, 4-րդ աստիճանում, պահպանելով պայմանի պարագաների փոխակերպված հետադասությունը, կվերացնենք ընդհանուր գերադաս նախադասության կրկնությունը՝ բնօրինակի նմանողությամբ՝ պահպանելով այն միայն առաջին աստիճանի պայմանից առաջ, կվերացնենք դիտարկվող տեքստամասի տողատված համարակալումը և կկատարենք բաղադրիչ նախադասությունների համարակալում, 5-րդ աստիճանում կտանք շարահյուսական կառուցվածքի գծագիրը, 6-րդ աստիճանում կկատարենք շարահյուսական և տրամաբանական պայմանների նշանագիտական համեմատություն:

**ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆ: ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ
ԱՆՄԻՋԱԿԱՆՈՐԵՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ
ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ**

Ջննելով տեքստը՝ պարզում ենք, որ **2.3.** կետում արտահայտված միջուկային նախադասության (*գնորդն իրավունք ունի*) անմիջական լրացումները տողատված կետերում հանդես եկած հատկացուցիչներն են՝ *հրաժարվելու* (2.3.1.), *պահանջելու*, *հրաժարվելու*, *պահանջելու* (2.3.2.), *պահանջելու* (2.3.3.), *հրաժարվելու*, *պահանջելու* (2.3.4.ա)), *պահանջելու* (2.3.4.բ)) միավորներով: Դժվար չէ պարզել, որ բերված կառուցվածքը համապատասխանում է մաթեմատիկական բաշխական օրենքին: Քանի որ բոլոր հատկացուցիչների հետ հանդես է գալիս միևնույն հատկացյալը, ապա այն՝ որպես ընդհանուր անդամ, նշանակենք լատինատառ **u**-ով (universal բառի սկզբնատառը), իսկ հատկացուցիչները՝ լատիներեն այբուբենի առաջին երկու տառով՝ թվանշանային համարակալմամբ, քանի որ միայն երկու բառով են արտահայտված դրանք: Ըստ այդմ՝ կունենանք՝

u – իրավունք (ընդհանուր հատկացյալ),

a₁ – հրաժարվելու (2.3.1.),

b₁, **b₂** – պահանջելու (2.3.2.),

a₂ – հրաժարվելու (2.3.2.),

b₃ – պահանջելու (2.3.3.),

a₃ – հրաժարվելու (2.3.4.ա)),

b₄ – պահանջելու (2.3.4.ա)),

b₅ – պահանջելու (2.3.4.բ)):

Այժմ կարող ենք տալ ընդհանուր անդամի բանաձևը.

$$u(a_1 + b_1 + b_2 + a_2 + b_3 + a_3 + b_4 + b_5):$$

Կատարելով անհրաժեշտ նույնացում՝ կունենանք նույն բանաձևի հակիրճ տարբերակը՝ որպես հանրահաշվական հավասարում.

$$u(3a + 5b) = u3a + u5b:$$

ԵՐԿՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆ: ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՐԺՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄԸ

Քանի որ հատկացուցիչներն արտահայտված են անորոշ դերբայներով, ապա ունեն նաև պարտադիր արժույթայնությամբ պայմանավորված իրենց խնդիրները («հրաժարվել» բայը՝ անուղղակի, «պահանջել» բայը՝ ուղիղ խղիր): Դերբայների խնդիրները, անկախ իրենց հոլովական ձևավորվածությունից, նույնպես արտահայտված են անորոշ դերբայներով, որոնցից «հրաժարվել» դերբայի դերբայական լրացումը դրված է բացառական, «պահանջել» դերբայի դերբայական լրացումը՝ ուղղական («հայցական») հոլովով: Եվ քանի որ այս ենթաստորադաս լրացումներն էլ դերբայներ են, ապա դրանք էլ ունենում են իրենց արժույթները, որոնք նույնպես կարտածենք այստեղ, իսկ արդեն սրանց լրացումները, համարելով կառուցվածքային տեսանկյունից ոչ

պարտադրական[2:11] անդամներ, կներկայացնենք փակագծերում:
Արդ՝ նախադասության միջուկի «ճեղքմամբ» ունենում ենք մտային
առանցքի ընդլայնմամբ հետևյալ կապակցությունները.

1) *Գնորդն իրավունք ունի (միակողմանի) հրաժարվելու
(սույն) պայմանագիրը կատարելուց (2.3.1.).*

2) *Գնորդն իրավունք ունի պահանջելու լրացնել (սպրանքի
պակաս հանձնված) քանակը կամ հրաժարվելու (չհանձնված
սպրանքի համար) վճարելուց, պահանջելու վերադարձնել
(վճարված) գումարը (2.3.2.).*

3) *(իր ընտրությամբ) պահանջելու՝*

ա) (համաչափ) պակասեցնել (սպրանքի) գինը.

*բ) (ողջամիտ ժամկետում անհատույց) վերացնել (սպրանքի)
թերությունները.*

*գ) հատուցել (սպրանքի թերությունները վերացնելու համար
իր կատարած) ծախսերը (2.3.3.).*

4) *ա) հրաժարվելու (սույն) պայմանագիրը կատարելուց և
պահանջելու վերադարձնել (սպրանքի համար վճարված) գումարը.*

*բ) պահանջելու փոխարինել (անպատշաճ որակի) սպրանքը
(սույն պայմանագրին համապատասխանող որակի)
սպրանքով (2.3.4.).*

5) *(անլրակազմ սպրանք հանձնելու դեպքում իր ընտրությամբ)
պահանջելու՝*

ա) (համաչափ) պակասեցնել (սպրանքի) գինը.

բ) (ողջամիտ ժամկետում) համարել սպրանքը:

ԵՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆ: ԻՐԱՎԱԳՈՐԾԱՌԱՄԿԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ

Այժմ արտածենք այն պայմանները, որոնց գոյությամբ է հնարավոր կատարել հրաժարման և պահանջի գործողությունները: Նկատենք, որ այս տեքստի՝ ոճական արժեք ներկայացնող ինքնատիպության դրսևորումներից աչքի զարնողը պայմանի ստորադաս նախադասությունների միջադաս շարադասությունն է: Սակայն մեր քննության այս հատվածում ակնառու դարձնելու համար իրավական հարաբերություններում ստեղծվելիք պայմանները արտածելիս դրանք նպատակայնորեն հետադասում ենք: Ամբողջական տեքստը տրոհում ենք այնքան հատվածների, որքան պայմաններ նշված են նրանում: Նկատենք, սակայն, որ պայմանները ոչ միայն ստորադաս նախադասություններով են արտահայտված, այլև դրանց համարժեք բառակապակցություններով, ուստի դրանք ևս այստեղ բաղադրիչ օղակ կդարձնենք: Եթե միևնույն ենթակետում մեկից ավել պայման է նշված, ապա դրանք ներկայացնում ենք առանձնաբար՝ առանձին համարով: Այսինքն՝ տվյալ դեպքում մեզ հետաքրքրողն առավելապես ոճական կողմն է, իսկ շարահյուսական ամբողջական կառուցվածքին կանդրադառնանք վերջում: Վերլուծությունը չձանրացնելու համար դուրս ենք գրում միջուկային նախադասությունը՝ առանցքային հատկացուցիչներով, վերջիններս՝ իրենց խնդիրներով և ենթաստորադաս խնդիրներով,

ապա վերջում ավելացնում ենք համապատասխան պայմանը:
Մրանք ևս ներկայացնում ենք համարակալմամբ:

1) *Գնորդն իրավունք ունի հրաժարվելու պայմանագիրը կատարելուց, եթե Վաճառողը հրաժարվում է վաճառված ապրանքը հանձնելուց:*

2) *Գնորդն իրավունք ունի պահանջելու լրացնել ապրանքի քանակը կամ հրաժարվելու չհանձնված ապրանքի համար վճարելուց, եթե Վաճառողը հանձնել է սույն պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք:*

3) *Գնորդն իրավունք ունի պահանջելու վերադարձնել գումարը, եթե պակաս քանակի ապրանքի համար վճարել է:*

4) *Գնորդն իրավունք ունի պահանջելու համաչափ պակասեցնել ապրանքի գինը, վերացնել ապրանքի թերությունները, հատուցել իր կատարած ծախսերը, եթե հանձնված է անպատշաճ որակի ապրանք:*

5) *Գնորդն իրավունք ունի իր ընտրությամբ հրաժարվելու սույն պայմանագիրը կատարելուց և պահանջելու վերադարձնել ապրանքի համար վճարված գումարը, պահանջելու փոխարինել անպատշաճ որակի ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով չվերացող թերություններ հայտնաբերելու դեպքում:*

6) *Գնորդն իրավունք ունի իր ընտրությամբ պահանջելու համաչափ պակասեցնել ապրանքի գինը, ողջամիտ ժամկետում համալրել ապրանքը անլրակազմ ապրանք հանձնելու դեպքում:*


**ՉՈՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆ: ԳԵՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ
ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՈՒՄ ԿԱՄ ԴԱՐՁ ԴԵՊԻ ԲՆՕՐԻՆԱԿԻ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔ՝ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԵՏԱԴԱՍՈՒԹՅԱՆ
ՊԱՀՊԱՆՄԱՄԲ**

Գնորդն իրավունք ունի հրաժարվելու պայմանագիրը կատարելուց (1), եթե Վաճառողը հրաժարվում է վաճառված ապրանքը հանձնելուց (2), պահանջելու լրացնել ապրանքի քանակը կամ հրաժարվելու չհանձնված ապրանքի համար վճարելուց (1), եթե Վաճառողը հանձնել է սույն պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք (3), պահանջելու վերադարձնել գումարը (1), եթե պակաս քանակի ապրանքի համար վճարել է (4), պահանջելու համաչափ պակասեցնել ապրանքի գինը, վերացնել ապրանքի թերությունները, հատուցել իր կատարած ծախսերը (1), եթե հանձնված է անպատշաճ որակի ապրանք (5), իր ընտրությամբ հրաժարվելու սույն պայմանագիրը կատարելուց և պահանջելու վերադարձնել ապրանքի համար վճարված գումարը, պահանջելու փոխարինել անպատշաճ որակի ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով չվերացող թերություններ հայտնաբերելու դեպքում, իր ընտրությամբ պահանջելու համաչափ պակասեցնել ապրանքի գինը, ողջամիտ ժամկետում համալրել ապրանքը անլրակազմ ապրանք հանձնելու դեպքում (1):

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆ: ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԳԾԱԳԻՐԸ

Գծագիր 1

Համաստորադասություն: Պայմանի համաստորադաս նախադասություններ



ՎԵՑԵՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆ: ՇԱՐԱՀԱՅՈՒՍԱԿԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ

Ինչպես երևում է առանձնացված հատվածից, իրավատրամաբանական վեց պայման կա, որն իր շարահյուսական արտահայտությունն է ստացել նույնաբանակ պայմանի պարագաներով, որոնցից առաջին չորսում դրանք արտահայտված են պայմանի պարագա ստորադաս նախադասություններով՝ «Եթե»-ով պայմանի շաղկապվածությամբ, իսկ վերջին երկուսում՝ պայմանի պարագա բառակապակցություններով՝ հարաբերված նույն գերադասի հետ «դեպքում» կապական բառի հանգուցավորմամբ: Շարահյուսական և իրավատրամաբանական միջնշանային հարաբերությունը ընդհանրական է նշանակյալի տիրույթում [4:271-282; 5:262-269; 6:57-92]: Երկու դեպքում էլ վեց պայման է հարաբերված առանցքային նախադասությանը: Տարբերությունը նշանակիչների դրսևորման մեջ է: Շարահյուսորեն պայմանանիշներից չորսի նշանակիչները ստորադաս նախադասություններ են, մինչդեռ վերջին երկուսը բառակապակցություն են, որոնք գերադաս նախադասության բաղադրիչներ են: Իրավաբանական

տրամաբանության մեջ շարահյուսական կառուցվածքի նշանակյալ-նշանակիչ հակադրության չեզոքացում է տեղի ունեցել, որովհետև թե՛ ստորադաս նախադասությունները, թե՛ բառակապակցությունները իրավական տեքստի **իրավագոր** պայմաններ են:

Այս պարզաբանումներից հետո վերստին անդրադառնալով **2.3.–2.3.5.** կետերում շարադրված տեքստային կառուցվածքին՝ բացահայտում ենք իրավաբանական տրամաբանության դերը, որը լեզվին «թելադրել» է շարահյուսական չեզոք կառուցվածքի վերակազմավորում, ուղղորդում դեպի մասնագիտական լեզվի ինքնատիպ կառուցվածք, որը հասկանալիորեն հայերենի քերականական համակարգի սահմանից դուրս լինել չի կարող, սակայն թե՛ չեզոք, թե՛ նույնիսկ գեղարվեստական ոճից տարբերվող ձևավորվածություն ունի, որ հատուկ է հե՛նց իրավագիտական ոճին: Ճիշտ այստեղ է՝ իրավագիտության և լեզվաբանության այս հանգակետում, որ ձևավորվել է իրավալեզվաբանությունը՝ որպես միջգիտակարգ[2: 27-48]: Բերված տեքստի բնօրինակ հատվածում (2.3.–2.3.5.) նշված միջգիտակարգին առաջնայնորեն հետաքրքրող ոճական դրսևորումներն են՝ ա) **նույնակապությունը** (միննույն կապի («դեպքում») կրկնությունը), բ) **նույնաշաղկապությունը** (միննույն շաղկապի («եթե») կրկնությունը), գ) նույնաշաղկապ կառույցներով **թվարկումը**, դ) թվարկման թելադրանքով ոճական **աստիճանավորման** ապահովումը, ե) արժույթային խստապահանջությամբ պայմանավորված կառուցվածքային **լարվածությունը** (հմմտ. **2.3.** կետի՝ «իրավունք ունի» արտահայտության կապակցվածությունը **2.3.5.** կետի «պահանջելու» արժույթի հետ, գ) տրամաբանական բնեռները տեսանելի դարձնելու նպատակային **միջադասությունը**՝ պայմանների **ընդմիջարկմամբ**, ե) սկզբնակետից մինչև տրամաբանական ծայրակետ ընդմիջարկումների **օղակումը**, որով նույնացման սանդղակին են հայտնվում իրավաբանական տրամաբանությունը և իրավալեզվաբանական շարահյուսությունը:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

1) Ինչպես տեսնում ենք, նոտարական, ինչպես նաև առհասարակ իրավական փաստաթղթերը հայերենում ևս կարող են ոճական արժեք ներկայացնել նախ՝ պետական հոգատարության, ապա՝ մասնագետների՝ գրական հայերենի նկատմամբ լեզվական նախանձախնդրություն ցուցաբերելու դեպքում: Մյուս կողմից, բարձր մակարդակով ձևակերպված իրավական փաստաթղթերն իրենց հերթին կարող են նպաստել գրական լեզվի զարգացմանը, մանավանդ որ դրանք, առանց բացառության, այս կամ այն չափով առնչվում են բոլոր քաղաքացիների կենսագործունեությանը:

2) Լեզուն իրավաբանների առաջնային գործիքն է, ուստի իրավաբան-իրավագետների համար պարտադիր է ոչ միայն դատողությունների տրամաբանության կանոնական նրբություններին տիրապետելը, այլև ընդհանրական տրամաբանությունը հայերենի շարահյուսական տրամաբանության կանոններին համապատասխանեցնելը՝ ուշադրության ծիրում պահելով, ի թիվս այլոց, նաև տրամաբանական շաղկապների և արժույթայնության ճշգրիտ գործադրության ապահովման խնդիրը, ինչպես նաև ոճական հնարների զինանոցին տիրապետելը:

3) Իրավագիտական ոճը հանրության լայն շերտերին հասու լինելու բերումով աղերսվում է չեզոք ոճին, որպես գիտության մի ճյուղի լեզվի արտահյտություն՝ գիտական ոճին, տրամաբանական պեսպիսությունների «վայելքին» տրվելու առավելությամբ՝ գեղարվեստական ոճին, և այնուամենայնիվ չի նույնանում դրանցից ոչ մեկի հետ՝ իր ոճական յուրահատկությունը պահպանելով հաճախ նշված ոճերի համատեղման անհրաժեշտությամբ:

4) Որքան ճշգրիտ է իրավական տեքստի լեզվական արտահայտվածությունը, այնքան արժեքավոր է նրա նշանակությունը տեքստի տարընթերցումներից խուսափելու առումով: Մրանով է պայմանավորված հատկապես իրավական տեքստի հանրահաշվականացման հնարավորությունը, որը լավագույն ապացույցն է ճշգրիտ տեքստակազմության:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ապրեայան Մ., (2010) Մասնագիտական (իրավաբանական) լեզվի և գործառական ոճի հարաբերակցությունը, Երևան, ԵՊՀ հրատ., 56 էջ:
2. Ջահուկյան Գ., (1974) Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 588 էջ:
3. Bühler K., (1934) Sprachtheorie, Jena, 434s.
4. Gläser R., (1990) Fachtextsorten im Englischen, Tübingen: Narr, 332 s.
5. Heineman W., (1991) Viehweger D., Textlinguistik, Tübingen: Niemeyer, 440s.
6. Tiersma P., (1999) Legal Language, 314p.
7. <https://www.advocatearm.am/files/2.pdf>